




ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ՝
1954 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-ԻՆ, ՎԱՐԱԳԱ Ս. ԽԱՉԻ
ՏՈՆԻՆ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱՇՆՈՒՄ ՍԵՌՈՆՕՐԶՆԵՔ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԵՈՐԴ ԵԱԹԱՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ,
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄՔ ՏԵԱՌՆ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ
ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ,
ԵԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԷ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՐԵՐԱՐ
ԱԹՈՒՈՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵԼԵՑԻՈՑ
ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷԶՄԻԱՇՆԻ

ՄԵՍԻ ՏԱՆՆ ԿԻԼԿԻՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԱՄԵՆԱՊԱՏԻ Ս. ԽԱԴ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱԶԱՊԱՀԵԱՆԻՆ, ՍՐԲՈՑՆ ՍԱՂԻՄԱՅ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵ-
ՂԱՊԱՀ ԱՄԵՆԱՊԱՏԻ Ս. ԵՂԻՇԵ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐԵԱՆԻՆ, ԿՈՍՏԱՆ-
ԴՆՈՒՊՈԼՍՈՑ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆԱՊԱՏԻ Ս. ԳԱՐԵԳԻՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԽԱԶԱ-
ՏԸՐԵԱՆԻՆ, ԳԵՐԱՇՆՈՐՀ ԱՌԱՋՆՈՐԴԱՅ ՀԱՄՕՐԷՆ ԹԵՄՕՐԷԻՑ ՀԱՅՈՑ, ՀՈԳԵ-
ԻՈՐ ՀԱՐՑ, ԵՂԲԱՐՑ ԵՒ ՀԱՄԱՅՆ ԺՈՂՈՎՐԴԵԱՆՍ, ՀԱՐԱԶԱՏԻՑ ՄԱՅՐ ԱԹ-
ՈՒՈՑ ՍՐԲՈՑ ԷԶՄԻԱՇՆԻ Ի ԳԱՀԷՆ ՍՐԲՈՑ ՀՕՐՆ ՄԵՐՈՑ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՁԻ
ԵՒ Ի ԳԱՀԱԿԱԼԷ ՆՈՐԻՆ՝ ՏԻՐԱՒԱՆԻ ՈՂՋՈՑՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ

Քաանուք տալի է, որ Ս Էջմիածնում տեղի ունեցած չէ Սրբալույս Մեռոնի օրհնությունը, հայ ժողովրդի առօրյա մոտիկ նվիրական և խորհրդավոր սուրբ աղափարություն, որի հետևանքով զրկվել է նա հոգեկան բարձր միախառնությունից:

Երջանիկ ենք, որ բախտ պիտի ունենանք կատարելու եկեղեցական-ազգային այդ հուզիչ և խորհրդավոր հանդեսը՝ Սրբալույս Մեռոնի օրհնությունը, պահպանելով Հայաստանյայց Առաքելա-

կան եկեղեցու դարերով սրբագործված և նվիրական դարձած սրբազան խորհուրդը, որ՝ որպես հայրենի սուրբ ավանդ, բողիկ են մեզ մեր եղանկահիշատակ հայրապետները:

Առավել բախտավոր ենք Մենք՝ մանավանդ այն պատճառով, որ Սրբալույս Մեռոնի օրհնությունը առաջին անգամ Մենք պիտի կատարենք Մայր Հայաստանի ազատ և անկախ պետականության վսեմ պայմաններում, Մայր Հայրենիքի և հայրենի հարազատ իշխանության հովանու տակ՝ ի մխիթարություն հայ ժողովրդի և ի փառս Հայ եկեղեցու:

Ս. Կրճում օծման յուրը որպես նյութեղեն միջնորդ է, որով առավածային Հոգին և շնորհը իջնում և ներգործում է մարդոց և իրերի վերա: Ուստի և Հին Ուխտի մեջ՝ շատ հին ժամանակներից, օծումն ունեւ նվիրագործող նշանակություն և՛ ինչպես առարկաներ, նույնպես և անձինք, որոնք նվիրված էին Աստուծո սպասարկության, օծվում էին ձրթնու յուրով: Այսպես՝ օծված էր Մովսեսի Վկայության Խորանը իր բոլոր կահավորւթյամբ՝ Սրբության Սեղանով և Ավագանով: Օծմամբ էր ընդունում նաև իր սուրբ կոչումը սեղանին սպասավորող քահանան, որի ամբողջ կյանքը նվիրված պիտի լինի Աստուծո պաշտամանը:

Հայ ժողովրդի համար ևս Սրբալույս Մեռոնը, որպես նվիրական և խորհրդավոր սրբություն, սերտորեն կապված է քրիստոնեական պաշտամունքի հետ, ուստի և ամեն մի իր և անձն ա՛յն ժամանակ է միայն սրբազան ույծ ստանում նորա աչքին, երբ Սրբալույս Մեռոնի դրօշը կա վերան: Նա խաչ է հանում երեսը՝ եկեղեցու, Ս. Սեղանի, Ս. Ավագանի և սրբոց պատկերների առաջ, որովհետև Սրբալույս Մեռոնով սրբագործված են, համբուրում է եկեղեցու պաշտոնյայի աչքը, որովհետև օծյալ է:

Հայ եկեղեցին մի ազգային գեղեցիկ ավանդություն ունի, այն՝ որ Սրբալույս Մեռոնի օրհնությունը սկիզբ է առել Ս. Լուսավորչից և ամեն անգամ՝ նոր Մեռոն օրհնելիս՝ հին Մեռոն են խառնում հետը, որով Ս. Լուսավորչի օրհնած մեռոնի խմորը անցնում է նորին, և այսպես Սրբալույս Մեռոնը կապում է հայի ներկան հեռավոր անցյալի հետ:

Սրբալույս Մեռոնը հանդիսանում է նաև ամենասերս և անխզելի գոգը, որով՝ ի սիյունու աշխարհի տարածված հայությունը կապվում է իր քրիստոնեության ծագման վայրի՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հետ: Այս կապն է պատճառը, որ երբ Սրբալույս Մեռոնի կարսան դրվում է երկնավոր ճարտարապետի ցուցմամբ հիմնված Միածնաէջ Տաճարի Ս. Սեղանի առաջ, բեմի վերա, և Ս. Լուսավորչի հաջորդ՝ Ամենայն Հայոց Ընդհանրական Հովհաննիս օրհնության կոնդակը հրավիրում է իր հավաստյալ հոտին դե-

պի հանուրց Հայաստանյայց Մայր Աթոռը՝ հանդիսասես և տնակից լինելու Սրբալույս Մեռոնի մեծագույն և խորհրդավոր հանդեսի կատարմանը՝ արժանահամանից և հայրենի երկրի հեռավոր և մերձաւոր վայրերից գալիս ու համախմբվում է հայ ժողովուրդը Մայր Աթոռի շուրջը, ուր տեղի է ունենում այնպիսի մեծաշուք և հոգեպարար հանդես, որի նմանը չկա հայ մարդու համար ո՛չ մի տեղ և ո՛չ մի առթիվ:

Նկատի առնելով՝ որ 1926 թվականից ցայսօր Սրբալույս Մեռոնի օրհնություն տեղի չի ունեցել՝ և ներկայումս Հայ Եկեղեցին Սրբալույս Մեռոնի մեծ կարիք ունի, նկատի առնելով նաև հայ ժողովրդի կրոնական պահանջն ու անսահման տենչը Սրբալույս Մեռոնի օրհնության խորհրդավոր հանդեսը տեսնելու, այլև նորա իղծերի քաղաքական հանդիսացողների բանավոր և գրավոր պահանջից դիմումները՝ Մենք, չնայելով աշխարհի ալեկոծ վիճակին, Ս. Հոգու գորության և շնորհին ապավինած, սույն հայրապետական կոնդակով ծանուցանում ենք Մեր լծակից և գործակից եղբայր, Եկեղեցու հավատարիմ պաշտոնության և մեր սիրեցյալ հոսին, որ 1954 թվականի սեպտեմբերի 26-ին, Վարազա Ս. Խաչի տոնին, որտեղ ենք Սրբալույս Մեռոնի օրհնություն կատարել Հայ Եկեղեցու հնավանդ սովորության համաձայն:

Լիաճույս ենք, որ հայ հավատացյալ մարդը՝ հավատով զինված, իր նախնյաց արդարամիտ և անձնվեր ոգով ներշնչված, համարձակ կկատարե իր բարոյական պարտքը:

Մենք հավատում ենք, որ մեր նախնյաց և մեր ներկա Սրբություն Սրբոյր՝ հայ երեսօնյա մարդու լուստ Տաճարը՝ Մայր Աթոռ Ս. Էջմիածինը՝ իր սրբություններով, և մեր ներկա Մայր Հայրենիքը՝ իր պատմական հուշարձաններով, որպես մագնիսական ույծ, կքեռեն տարաբնակ և հեռաբնակ հայ ժողովրդի ներկայացուցիչներին ու կհամախմբեն պատմական Տաճարի շուրջը՝ Հայրենիքի կարոտն առնելու, հայրենի երկրի անցյալ և ներկա հուշարձանները տեսնելու, նորա ներկա կուլտուրական վերելքով հիանալու, նորա տեսնական խոշոր հառաջխաղացմամբ ոգևորվելու և իր կրոնական ծառավը հագեցնելու՝ համբուրելով իր սրբությունները ու՝ իր արհիմ մոտիկ Սրբալույս Մեռոնի օրհնությունը տեսնելով՝ ոգեշնչվելու և՝ արձագանքելով իր նախնյաց արժանույթ գգացմունքին՝ ձայնելու. «Եկայք շինեսցուք սուրբ գիտրանն լուսոյ...»: Հայրենի երբեմնի ավեր երկիրը՝ այսօր շինված՝ պայծառ պահենք, զորացնենք և նորանով զորանանք ու մխիթարվենք: Որպեսզի մենք չպարծենանք միայն մեր հոգևոր կյանքի կենսունի պատկառելի հնությամբ, նորա աստվածակառույց հարստությամբ:

սուրբամբ և անցյալ փառքով, պեսք է մեր հայրենի Տաճարն ու հայրենի երկիրը արտաբուս պայծառ ու հմայիչ և ներբուս կենդանի ու կենսասու պահենք՝ արժանավոր ժառանգ հանդիսանալով մեր ստեղծագործող, հերոսածին, պանծալի նախնիաց:

Աղոթենք կենսասու Փրկչին, որ տարածե Իր հովանի բազուկը Հայ երկրի վերա, զորացնե և արիացնե հայ ժողովուրդն ու հայ հոգևորականությունը իրենց բարոյական, տեսնական և կրոնական պարսփր կատարելու հանդեպ Հայ Ազգի, Հայրենիքի և Հայ Եկեղեցու:

Մաղթենք սիրո և խաղաղության Փրկչին, որ մաքրասեր ու խաղաղասեր ռզի ներշնչե աշխարհին, որպեսզի մաքրկությունը ստեղծագործական խաղաղ ու երջանիկ կյանք վարե:

Շնորհք և ողորմութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցի ընդ ձեզ և ընդ ամենեւեանդ. ամէն:

Գեորգ Զ

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԿ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուա կոնդակս ի 21-ն ապրիլի
1954 Փրկչական ամի,
և ի տումարիս Հայոց ՌՆԳ,
յիննեբրորդում ամի Հայրապետության Մերոյ,
ի վաճա Սրբոյ Էջմիածնի: